



ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՇԱԿ

Տարեկան գինը 5 րուբլ, կէս տարեկանը 3 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և այլ նստատեղերին
խանութում:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисе, Редакция „Машак“

Խմբագրատանը բաց է առաջօրեան 9—12 ժամ
(բացի կիրակի և առաջօրեից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանիւր բառից մի կոպէկ:

ԲՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Ձեր դարդակ խօսքերը.— Եւրեքին տեսու-
թիւնը: Այլուածական բաները և կրիդիտական
ընկերութիւնները: Նամակ խմբագրին: Նամակ
Աջակցից: Կերպին լուրեր: Արտաքին տե-
սութիւն: Հերցեգովինայի ապստամբութիւնը:
Նամակ Գերմանիայից: Խառն լուրեր:—
Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:—Ֆէլի-
տօն:

ՁԵՐ ԴԱՐԴԱԿ ԽՈՍՔԵՐԸ

I

Առնուաբարութիւն, փաստաբար ուղղու-
թիւն, ազգային գոյութեան փաստող վարդա-
պետութիւն... և այլ սորա նման դարդակ,
ոչինչ նշանակութիւն չունեցող խօսքերի ար-
տասանութեանը մենք արդէն վաղուց սո-
վոր ենք...

II

Անդադրացած մարդին յատուկ է կարծի-
ք որ նա հասնելու է իր բարոյական և նիւթա-
կան երջանկութեանը միայն այն ժամանակ,
երբ կը փնտռէ ուրիշներին: Իր նմաններին
փնտալով, անդադրացած մարդը կարծում է
որ ինքն բաղդաւոր կը լինի: Թող ես կուշտ
և ուրախ լինեմ.—ինչ որ ուրիշները քաղ-
ցած մնան, թող ես հարուստ լինեմ և այդ
նպատակին հասնելու համար մինչև անգամ
փոյթ չէ որ հարստահարեմ, կողպտեմ իմ
նմաններին: Եւս կարող եմ երջանիկ լինել միայն
այն ժամանակ երբ ուրիշները դժբաղդ են...

III

Ահա ինչպէս մտածում է և գործում է

ՖԵԼԻՏՈՆ

ԺԱՆՎԱԼԺԱՆ

Ամօթ ինչ...
Ֆրանսիացի Վիկտոր Հիւգօ տարեքն երկու-
երեք գիրք է գրում, իսկ ես ամիսը մի ան-
գամ մի ֆելիտօնն էլ չեմ կարող գրել...
Ընթերցողը կարգադրած կը լինի Մշակի մէջ
որ երևելի ծերունին դարձեալ նոր գրքեր է հրա-
տարարում... Ինչքան շատ է աշխատում այդ
պատաւ մարդը: Երանելի թէ մեզանում երկտա-
սարդները նրա արած աշխատանքից հազարերորդ
մասը կտարեին...

Երբեմն ձեռքս ընկաւ Վիկտոր Հիւգօի
«Թշուառներ» բովանդակ հայերէն թարգմանութիւնը:
Թարգմանութիւնը Կ. Պոլսում է արած և հայոց
Կ. Պոլսի բարբառով: Թէև այնքան յաջող չէ լե-
զուն և ոճը, բայց էլի ընթերցողին հասկացողու-
թիւն է տալիս գրվածքի գեղեցկութիւնների վրա:
Շատ է շատ հաւանեցայ ժաՆ-Վալժանին
տիպը:

Բայց այնուամենայնիւ եթէ ես Վիկտոր Հիւ-
գօի տեղը լինէի (ինչ յանդգնութիւն...), ես ու-
րիշ կերպ կը նկարագրէի ժաՆ-Վալժանին, ես
կընդարձակէի, կը շարունակէի նրա պատմու-
թիւնը...

Ես կը պատմեմ քեզ, ընթերցող, թէ ինչպէս
կը ներկայացնէի ես ժաՆ-Վալժանին, եթէ ես
Հիւգօի տեղը լինէի: Չը դատաւարեմ ինչ, ըն-
թերցող, իմ անասելի, հրեշաւոր յանդգնութեան
համար,—եթէ ես այդ տեսակ բան յանձն եմ առ-

անդադրացած մարդը.—նա չէ մտածում որ
ընդհանուր նա սորանով ոչ թէ միայն ու-
րիշներին է փնտռում, բայց և իր անձին...

Եթէ ես հարուստ կալուածատէր եմ, ինչ է
աւելի օգտուէտ ինչ համար որ իմ մշակ
երկրագործները բաւականութեան մէջ ապրեն,
կամ որ ես նրանց այն աստիճան հարստա-
հարեմ որ նրանք բոլորովին աղքատանան, հի-
ւանդանան, կորցնեն աշխատելու ոյժը և ըն-
դունակութիւնը, կորցնեն նիւթական միջոց-
ները այնպէս որ անդադար աւելի և աւելի
պարտքերի մէջ խրվեն, վերցրած փողի համար
անչափ մեծ տոկոսներ վճարելով:

Ինչ է աւելի գործնական դիցուք մի մարդի
համար, որ մի գործարան ունի՝ ձնշէլ հա-
լըստահարել իր բանւորներին, որոնց թարմ
ոյժերը նրան հարկաւոր են, կամ աշխատել
բոլոր ջանքը գործ դնել որ նորա առողջ ու
կուշտ լինեն, որ միշտ բաւականութեան մէջ
ապրեն:

IV

Բանի որ բաղդաւոր և ապահոված են
ինչ շրջապատող հասարակութեան բոլոր ան-
հասնելը, այնքան ինչ համար էլ լաւ է...
Իմ բաղդը և իմ նիւթական ապահովութիւնը
չը պէտք է լինեն ի փնտա ուրիշների և փո-
խադարձապէս...

Բայց այդպէս չեն մտածում անդադրացած
մարդիկ:

V

Ինչպէս որ մի հասարակութեան երջանկու-
թիւնը հիմնված պէտք է լինի նրա կազմող
անդամների փոխադարձ երջանկութեան վրա,—
նոյնպէս պէտք է և աղքերի փոխադարձ յա-

նում, ես այդ անում եմ միայն մարդասիրական
զգացմունքից զրկված՝ որովհետեւ պատուելի ձե-
րունի հեղինակը շատ գործ ունի, շատ զբաղված
է իր նոր հրատարակութիւններով.— և ես կամե-
նում եմ նրան օգնել...

Յոյս ունեմ որ նա իրան յատուկ բարի սրտով
չի բարեկամայ ինչ վրա, ներողամիտ կը լինի դէպի
ինչ...

VI

Ուրեմն շարունակեմ Հիւգօի ժաՆ-Վալժանին
պատմութիւնը:

ԺաՆ-Վալժանը մի բարոյապէս ընկած մարդ
է: Նրա համար գոյութիւն, հարստահարութիւն,
աւագակութիւն, սպանութիւն սովորական բան է:
Նա դատաւարաւորում է իրում բանդարկութեան
և տաժանակիր աշխատանքների: Բայց նա կա-
րողանում է գաղտնի կերպով փախել բանդից և
բաւական թափառելուց յետոյ զետեղվում է մի
քաղաքի մէջ: Եւ ահա այդ սարսափելի յանցա-
ւորը կամենալով ծածկել իր անցեալի յանցանք-
ները, լուանալ իր ձեռքերի վերայից արեւոյ հեւ-
քերը, լաւ գիտէ որ միակ միջոց կայ յարգված և
պատված լինելու հասարակութիւնից՝ այն է ամին
ներկիւն և աններկիւն միջոցներով հարստանալ և
յետոյ այդ ձեռք բերած հարստութեան միջոցով
չքեղ կերպով ապրել, եթէ կարելի է կաշառել ոյժ
ունեցողներին, հասարակ ժողովրդի աչքին թող
զցել զանազան բարեարարութիւններ գործելով...

Վիկտոր Հիւգօի ժաՆ-Վալժանը վերը ձգա-
րիտ դրնում է իր արածները վերա, ձգարիտ դառ-
նում է օրինարար մարդ, իր սրտի մէջ ձգարիտ,
անկեղծ կերպով մեղալ է ասում... Բայց ես չեմ
կարծում որ այդ հնարաւոր լինէր...

ԺաՆ-Վալժանը այն տիպն է, որ չէ կա-
րող փոշմանվել... Ես բարի էլ գործում է միայն
իր յանցանքները, որ դարձեալ շարունակում է
անել, աւելի ապշով կերպով գլուխ բերելու հա-
մար...

Բոլոր անասելի անիրաւութիւնները գործելուց

րարերութիւնները ձգտեն դէպի մարդկու-
թեան ընդհանուր երջանկութիւնը:

Աւելի բան չէ նշանակում կօսմօպօլի-
տութիւնը:

VI

Եւս կկսեմ կական աշխարհում իւրաքան-
չիւր ազգը կարծում էր որ կարող է բաղդա-
ւոր և հզօր լինել միայն այն ժամանակ,
երբ նրա հարեանը դժբաղդ, թոյլ ստորա-
ցրած և մինչև անգամ ոչնչացրած է...

Այդ համոզված են որ ընդհանուր մարդ-
կութեան երջանկութիւնը կախված է իր իւ-
րաքանչիւր անդամի, աղքատութեան, բաղ-
դաւոր, առողջ և ապահով կեանքից:

Աւրիմն ձգտել իր աղքատեան մտաւոր,
բարոյական, անտեսական, նիւթական դրու-
թիւնը բարելաւացնելու,—նշանակում է օգ-
նել, ծառայել ամբողջ մարդկութեանը:

Ահա ինչ է նշանակում կօսմօպօլիտու-
թիւնը, ինչ է նշանակում կօսմօպօլիտական
վարդապետութիւնը...

VII

Բայց աշխատել պաշտպանել մի ազգի մէջ
մի որ և է նորան սեփական յատկութիւն, որ
փնտալար է թէ անհասնելի աղատ զար-
գացման, թէ ընդհանուր մարդկային կազմ-
վածքի առաջադէմ զարգացման,—ինչպէս օրի-
նակ կղերական ոգին, կամ մի այլ սորա նման
խաւար անցեալի ծնունդը,—դա փնտալար լի-
նելով ընդհանուր մարդկութեան, պէտք է որ
փնտալար լինի և մարդկութեան մի ան-
դամ,—այս կամ այն աղքատութեան:

VIII

Ամբողջ մարմինը չէ կարող առողջ լինել

յետոյ, նա չէ բաւականանում հարստութեամբ,—
նա կամենում է վայելել փառք, պատիւ, ստանալ
սիրտըները և այդ բոլորը բաւական չէ՝ նա կա-
մենում է հասարակական դեր խաղալ, ընտրվել
եթէ կարելի է իր համաբաղադրանքներից կամ
պատգամաւոր կամ քաղաքապետ անգամ, և այլն...

Այդ էլ բաւական չէ,—նա կամենում է վեր-
ջապէս և սօւրբի անունը ժառանգել... Եւս կա-
մենում է առեղայն դառնալ... Բայց յետոյ մտա-
ծում է որ այդ չափից զուրա մեծ անհաղորդու-
թիւն կը լինէր: Աւելի լաւ չէ որ ինքն շարունակէ
կեանքը վայելել իսկ իր որդիներին զօնէ... Նա
այդպէս մտածելուց յետոյ վճռում է իր որդուն
աքելայ շինել, իր աղջկան կոյս...

Որդին ընդդիմանում է. նա սովորած լինելով
ուրախ և անկարգ կեանք վայելելու, երբէք կու-
տակօն դառնալու չէ. նա պնդվում է իսկ աղ-
ջիկը, աւելի կրատարական, անկախ ընտանու-
թենից աւելի զուրկ էակ, համաձայնվում է կու-
տանոց մտնել: ԺաՆ-Վալժան հիացած է, նա
գրեթէ հասած է իր նպատակին: Կաթօլիկ մո-
լեանդ կղերը նրա կողմն է, նա շահել է նրա սիրտը
մի հարուստ բաժինը տալով վանքին, աղջկան
կուտանոց մտցնելու ժամանակ:

Այժմ միայն մի բան է պակաս ժաՆ-Վալժա-
նին՝ ժողովրդականութիւնը: Պէտք է
այժմ շահել, գրաւել և ստորին ժողովրդի սրտերը:
Նա հմուտ հոգեբան է, նա գիտէ որ ֆրանսիա-
կան ստորին ժողովրդը ազնւոյ է, մոլեռանդ է,
որ նա աստուածապաշտ է ոչ թէ այդ բառի ազ-
նիւն նշանակութեամբ, բայց իր աստուածապաշտու-
թիւնը հասցնում է մինչև կատաղի մոլեռանդու-
թիւն, մինչև խաւար տգիտութիւն, մինչև սարսա-
փելի նախապաշարմունք... Ահա ժողովրդի այս
թոյլ կողմից օգուտ է քաղում իրան սուրբ և
պատուելի մարդ ձեռքնող հին յանցարար: Նա
մտածում է ինչ բան անել որ ժողովրդի աչքին
ընկնի,— ուսումնասիրել շինեմ,— չէ, ժողու-
վորդը դեռ այնքան դարձացած չէ, որ զգալ ու-
սումնարանի կարեւորութիւնը... Այլի՜ Բէ և զեցի

կրք որ նրա մի անգամը հիւանդ է և ամբողջ
մարմնի մի անդամ չէ կարող իր գոյութեան
համար անհրաժեշտ պայման դնել ամբողջ
կազմվածքից տարրեր, հիւանդ, անառողջ
կեանքով ապրել:

IX

Միայն այն բանը կարող է օգտուէտ լինել
առանձին անհատներին մի հասարակու-
թեան մէջ և առանձին աղքատութիւններին
մարդկութեան մէջ, որ ամբողջու-
թեան համար փնտալար չէ:

X

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԸ

ԵՒ

ԿՐԵՂԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջին ժամանակները բանկերը սխեդին
խաղալ մեր կեանքում այնպիսի մի նշանաւոր
դեր, որ մենք աւելորդ չենք համարում ասել
մի բանի խօսք դուռը փակու:

Բանկ բառը ծագում է իտալական բանկօ
(Banco) բառից, որ նշանակում է սեղան:
Միջին դարերում, երբ դեռ բանկերը յայտնի
չէին, դրանց դերը կատարում էին մասնաւոր
մարդիկ իրանց առաջ դրած մի սեղանի վրա
և ահա դրանից էլ ծագել է բանկի անունը:

Բանկերի նշանակութիւնն է լինել միջնորդ
կապիտալիստների և այնպիսի անձանց մէջ,
որոնք չունենալով փող, բայց մի արդիւնաւոր
տական կամ առեւտրական գործ սկսելու հա-
մար կամ թէ հողը բարեբերու համար՝ կա-
րտութիւն ունեն փողի, այդ դիտարանում
մի կողմից բանկերը, հատուցանելով յայտնի

չինեմ: Բայց որովհետեւ քաղաքում, չափէ, որով-
հետեւ այնքան շատ են արհեստարար կաթօլիկ եր-
կրներում մեծ քաղաքների մէջ եկեղեցիների
թիւը, որ եթէ միշտ աւելի լինի,— ոչ ոք ոչա-
դրութիւն չի դարձնի: Բացի սորանից քաղաքում
եկեղեցի չինելով, պէտք է մի մեծ, փառաւոր,
մայր եկեղեցի չինել, որ ժողովուրդը ուշադրու-
թիւն դարձնէ, իսկ այդ տեսակ մեծ շինութեան
վրա շատ փող կերթայ: ԺաՆ-Վալժանը հաշիւ-
ները լաւ գիտէ: Նա կամենում է փառք, պա-
տիւ վայելել, սուրբի անունն անգամ ժառանգել,—
բայց մի և նոյն ժամանակ չէ կամենում որ այդ
բոլորը նրա զրպանին շատ թանկ նստէ: Եւ եթէ
կարելի է այնպէս կանել որ անունը նրան լինի,
իսկ փողերը մեծ մասամբ ուրիշներից հաւաքած...

XI

Այդ ամենը լաւ կընելուց յետոյ ժաՆ-Վալժանը
վճռում է չինել մի փոքրիկ եկեղեցի, որ գուցէ
պակաս էլ կը նստէ քան թէ ստորագրութեամբ
հաւաքած փողերը (մնացածը էլի պէտք կը զայ
իրան),—բայց ծրեմք չինէ... այնպիսի տեղում,
ուր նրա շինածը ամենի աչքին կընկնի...

XII

Քաղաքից ոչ հեռու կայ մի հիմնաւոր բարձր
տեղ, որի մաքուր և առողջ օդը ներսնչելու հա-
մար ամառ ժամանակ քաղաքի հասարակութեան
բարձր և հարուստ դասը ընտրել է իրան արդաւ ա-
մարանոց: Ֆրանսիական հասարակութեան բարձր
դասն էլ բարեկալ է, նա չնորհալալ կը լինի
ժաՆ-Վալժանին որ միջոց կունենայ և ամառ ժա-
մանակ աղօթք անելու եկեղեցում, որից նա զուրկ
էր մնում մինչև այժմ:

Եկեղեցու օծման հանդէսը անպատճառ կը կա-
տարվի ամառ ժամանակ, երբ ամբողջ ֆրան-
սիական արիստոկրատիան ներկայ է ամարանո-
ցում,—իսկ ժողովրդի ստորին դասը, հեռուից լսե-
լով սուրբ մարդու բարի գործերի համբաւը և շատ
սիրելով ուխտագնացութիւնները, կը հաւաքվի օծ-

շահ, փողերը վերցնում են կապիտալիստներին և փոխ են տալիս իրանց պատասխանատուութեամբ կարօտ անձանց, միւս կողմից էլ է՝ ժանապետութեան կրօնը, որքան կարելի է՝

Որովհետեւ կարող է պատահել, որ բանկից փոխ առնողը մի քանի հազարամանկերից ստիպուած, չէ կարող վերադարձնել իր պարտքը, ուրեմն և բանկը, ստանալով վնաս, իրան ստացած շահերի գանգաճութիւնով միշտ չէ կարող ծածկել այդ վնասը և հատուցանել իրան պարտքերը, այդ պատճառաւ բանկերը ունենում են մի պարտականութեամբ, որով փոխադրում են այդպիսի և ուրիշ ստացած վրանաներ, եթէ շահերի անապահովութիւնը չէ կարող ծածկել դրանց։ Այդ պարտականութեամբ կամ ժողովում է կազմելով բաժանորդական ընկերութիւն, կամ պարտականութեամբ կապահովում են իւրաքանչիւր բանկի կամ պարտականի յայտնի պատասխանատուութեամբ, կամ թէ մի քանի մարդիկ կամ մի ընդհանուր հասարակութիւն գոհում են բանկը հիմնելու համար մի պարտականութեամբ, յայտնի պայմաններով։

Եթէ մենք քննենք բոլոր բանկերը և կրօնքիական ընկերութիւնները, մենք կը նկատենք, որ դրանք իրանց տուած կրօնքիական կողմից բաժանվում են երկու տեսակի՝ 1, կարճ պայմանաժամով, 2, երկար պայմանաժամով։ Առաջին տեսակը փոխ է տալիս ոչ աւելի քան 9 ամսով, կամ ինչպէս վերսկի հատուց (escompte) կամ ուրիշ գրաւարկով զրոյստարակէ շրջափառումը, դրանք են աւել տրական բանկերը և այնպիսի ընկերութիւնները, որոնք ունեն մի և նոյն նպատակը։ Երկրորդ տեսակը՝ մի քանի տարիներով փոխ են տալիս գումարները և անպատճառ անշարժ կայքի գրաւարկանով։ Դրանք են կալուածական բանկերը և կրօնքիական ընկերութիւնները։^{*} Մենք այստեղ խօսելու ենք միայն երկրորդ տեսակի վրա, ինչպէս մի նոր հիմնարկութիւն։

Կալուածականները մէջ փոխ առնել փողը, դարձնել ապրանք և մի կարճ ժամանակից յետոյ էլի դարձնել փող կամ մի ուրիշ գումար անձին է կիսկալիստ, որով նրանք կարողանան հատուցանել իրանց պարտքը բանկին նշանակած ժամանակին, շատ հեշտ է և պահանջում է կարճ ժամանակամիջոց, կարելի է ասել ըստէնդ։ Ահա ինչու համար աւելտրական բանկերը փոխ են տալիս ամենաերկար ժամանակ ինքն ամսով։ Կալուածական կրօնքիական ընդհանրա-

^{*} Բանկերը և կրօնքիական ընկերութիւնները ունեն մի և նոյն նպատակը և գանգաճութեամբ են միմեանցից իրանց կազմակերպութեամբ, ուրեմն եթէ մենք յիշում ենք միմեանց, պէտք է կարծել որ խօսում ենք միւսի մասին։ Ծ. 2.

աւել պահանջում է երկար ժամանակամիջոց։ Եթէ մենք փոխ ենք առնել բանկից մի գումար մեր հողը բարեկարգելու համար, հետեւեալը կը լինի այն, որ բերքը տարից տարի մի քանի պրոցէնտ կ'աւելանայ առաջվանից մինչև որ կը հասնի մի յայտնի կէտին, ուրեմն մենք էլ հարկադրված կը լինենք բանկին հատուցանել մեր պարտքի մի մասը, ինչպէս և փոխ առած փողի շահը, մինչև որ շատ տարիներից յետոյ մեր պարտքը մասերով բոլորովին կը լցուցանենք։

Շինք այդ պատճառաւ էլ կալուածական բանկերը փոխ են տալիս երկար ժամանակամիջոցով, այն է 8-ից մինչև 56 տարի, թողնելով պարտք վերցնողի կամքին ընտրել ժամանակամիջոցը։ Պատահում է, որ կալուածատերը հարկաւորութիւն ունի փողի կարճ միջոցով, ինչպէս օրինակ կէս տարով, մի տարով և այլն։ Այդ դիպուածում, այն բանկերը որոնք ունեն դրամագլուխ, դրա մի մասը գործ են ածում այդպիսի փոխառութեան համար և ժամանակամիջոցը լինում է մինչև 3 տարի։ Այդ վերջինը կալուածական բանկերը անուանում են՝ փոխ առնող և փոխ կարճ պայմանաժամով և դա համեմատելով երկար պայմանաժամով պարտքերի հետ, զոյգանում է ամենաշինքի մասը։

Այն անձը, որ կամենում է իր կալուածքը գրաւ դնել բանկում, վերցնում է տեղի աւագ նոտարիւտից գրաւագրական, (ЗАЛОГОВОЕ СВИДЕТЕЛЬСТВО), որտեղ ամանաւորն նշանակում է անշարժ կայքի որքանութիւնը, նրա մէջ եղած շինութիւնը, ունի պատկանելը և խնդրելի հետ ներկայացնում է բանկին յայտնելով իր ցանկացած գումարը և ժամանակամիջոցը։ Բանկի վարչութիւնը խնդրի գումարը և ժամանակամիջոցը և փոխ է տալիս գումարաւորութեամբ միայն 40%—50% գրաւական կայքի համար, 60% կամ փողը ինչ աւել բարդալիս կայքի համար։

Շինք հարցնում ենք՝ բանկերը, ինչպէս են կարողանում այդչափ միլիոններ պարտք տալ, երբ նրանցից համարեալ ոչ միւր չէ ընդունում գումարներ, և ոչ էլ ունեն դրամագլուխ, իսկ մնացածի դրամագլուխը համեմատելով փոխ տված փողի հետ ունեն։ Դա բացառում է կալուածքը և փոխ է տալիս գումար հաւանքով և շատ հեշտ, երբ գրաւ դնողը համարվում է ստանալ վարչութիւնից նշանակած գումարը, բանկը նրան տալիս է պարտաւոր փողի տեղ գրաւական թիւը թիւ կամ օբլիգացիոններ։ Այդ թիւը թիւը գրաւ դնողը ծախում է բոլորապէս և բանկը գումարում է պարտական այն անձինքներին, որոնց մօտ դրամվում են գրանք և տալիս է նրանց շահ տարեկան 5%—6%, ինչպէս և ինքը բանկը ստանում է գրաւ դր-

նողից։ Բացի դրանից նա ստանում է գրաւ դնողից գրաւական թիւը կամ պարտաւորութեան գումարը ծախելով անկող համար միանգամից 1/2%—1 1/2% և 1%—1 1/2% տարեկան պնդէս որ բանկի օգուտը գոյանում է այդ երկու գումարից, որոնցից մի մասով պահում է վարչութիւնը, միւս մասը դնում է պահեստի գրամագլուխ (запасный капитал) անուանված գումարի մէջ, իսկ մնացածը տալիս է ինչպէս զիվիդնեղ ակցիոններին, կամ անդամներին, կամ գործ է ածում ուրիշ ձևով, ինչպէս որ որոշված է նրա կանոնագրութեան մէջ։

Դուրս տված գրաւական թիւը կարող է պարտք բանկը իւրաքանչիւր կէս տարին տիրաւորել լցուցանում է այն գումարից, որ հաւանքում է իրան պարտականներից, ինչպէս պարտքի հատուցումն։

Բանկը, իր պարտքի ձեռք հատուցումը պահանջում է բոլոր իր մօտ գրաւ դնած կալուածներով և իր պահանջական և պահեստական կապիտալով։ Եթէ պարտականի իր ժամանակին չը հատուցանի իր պարտքից նշանակած մասը, այն ժամանակը բանկը պնդէս պարտականներից առնում է յայտնի տուգանք և նշանակած ժամանակից յետոյ ծախում է գրաւ դնած կալուածքը, իսկ տիրաւոր դուրս եկած գումարը նմանապէս և շահը հատուցանում է իր պահեստական գրաւագլուխը, ստացած ձեռք հատուցանողներից կէս տարով աւագ փողից և եթէ դրանք բաւական չեն, այն ժամանակ պահանջական դրամագլուխը, եթէ ունի, կամ այնպիսի ձեռք, ինչպէս նրա կանոնագրութեանը թելադրում է։

Մի բանի բանկին ինչպէս իրանց պարտքերը և շահը հատուցանում են ունեւոր կամ թղթադրամով ուսու կուրսով, իրանց գրաւական թիւը կարող է արժէքը բարձր պահելու համար, այնպէս և ստանում են իրանց պարտականներից։ Բայց այդ սխալ հայեացք է, որ իբր թէ այդ ձևով գրաւագլուխը արժէքը բարձր է պահվում։ Նախ որ չը նայելով, որ այդ բանկերը հատուցանում են ունեւոր նրանք դուրս են թողնում գրաւական թիւը թիւ մէջ գումարի, ուրեմն համեմատ ընդհանուր օրէնքին, առաջարկութեանը շատ լինելով պահանջից, գրաւագլուխը արժէքը թիւը կը ցածանայ։

Երկրորդ, եթէ օրինակ նրանց կուրսով ստացել են իրանց պարտականներից մի պօլուրիմպերիալին 6 ռուբլ, իսկ իրանց պարտքը հատուցանելու ժամանակը պօլուրիմպերիալի կուրսը դարձել է 6 ռուբլ 5 կոպ, մնացած 5 կոպէկը դրողից պէտք է հատուցանեն։

Վերջացնելով մեր խօսքերը մենք չենք կարող ցոյց չը տալ մեր համակրութիւնը աւելի

դէպի բաժանորդական ընկերութեան բանկերը։^{*} մի կողմից թէպէտ բանկերը, որոնք հիմնված են փոխադարձ համարաշխուհի ձևի վրա, բոլոր ստացած օգուտը վերադարձնում են իրանց անդամներին կամ գործ են ածում տեղական երկրագործութիւնը կամ երկրագործ դասի գրութիւնը բարեկարգելու վրա, միւս կողմից դրանք չունենալով պարտաւոր փող, չեն կարող, ինչպէս բաժանորդական բանկերը, տալ պարտք կարճ պայմանաժամով։

Մենք նմանապէս չենք կարող թողնել աւել պատասխանի այն լուրերը, որոնք տալու են թիւթիսի անդամական բանկի մասին այն է, որ 100 մանէթի տեղ տալիս են 80 մանէթ, իսկ հաշվում են պարտականի վրա 100 մանէթ։

Շինքարեւ է, որ բանկը հատուցանում է 100-ին 80 ռուբլ, միայն պարտականին հեշտացնելու համար, իսկ մնացածը վերադարձնելու է նրան գրաւական թիւը ծախելուց յետոյ։ Ինչպէս յայտնի է անդամական բանկի գրաւական թիւը կուրսն է 27 1/2 տարով 94 1/2 այսինքն 100 մանէթի գրաւական թիւը թիւն տալիս են պարտականի փողով 94 մանէթ 50 կոպէկ, ուրեմն գրաւ դնողը կորցնում է ամեն մի հարիւր մանէթի մէջ 5 մանէթ 50 կոպէկ։ Վնանք և տեսնենք ինչքան զգալն է այդ վնասը գրաւ դնողի համար, վերցնելով իսկականից ցած կուրս օրինակ 90, այսինքն երբ վնասը հասնում է 100 մանէթի մէջ մինչև տասը մանէթ։

Օրինակ մենք մեր կալուածքը գրաւ ենք դնում 10,000 մանէթի 27 1/2 տարով, մենք այդ գումարին տարեկան պէտք է տանք շահ 6 3/4% որ համարաւ է 600 մանէթի 1 1/2%, ինչպէս մեր պարտքի հատուցումն և վերջապէս 1 1/2% բանկին օգուտ, ընդամենը տարեկան 900 մանէթ կամ 9%։

Ուրեմն այդ գումարը մենք պէտք է հատուցանենք իւրաքանչիւր տարին, որ 27 1/2 տարուց յետոյ ազատվենք մեր պարտքից, բայց որովհետեւ մենք գրաւական թիւը դարձնելով փող 90 կուրսով կը ստանանք միայն 9000 ռուբլ և այդ գումարի համար տարեկան պէտք է հատուցանենք 900, ուրեմն ոչ թէ 9% այլ 10%։ Այսպիսով պարզ կարելի է տեսնել, որ գրաւ դնողը ծախելով գրաւական թիւը իրան արժողութիւնից ցած 10 պրոցէնտով, ոչինչ վնաս չէ կրում, բայց նրաւնից, որ իր ստացած փողի համար 9%-ի անց վնասում է 10%։ Շինք հարցնում ենք այդ

^{*} Մեր ընթերցողները արդէն գիտեն, թէ խումբագրութիւնը այդ ամսին չէ բաժանում պատուելի աշխատակցի կարծիքը (տես Մշակու ձե 22)։

Իմք.

ման ժամանակ եկեղեցու չորս կողմը օրպէս մի ուխտատեղի։

Վերջապէս մտադրածը իրագործվել է։ Ամառվայ ամենատաք ժամանակն էր։ Գեղեցիկ օր էր։ Ահագին և բազմատեսակ ժողովուրդը պատում էր եկեղեցին։ Օձման հանդէսը սկսված էր։

Բազմաթիւ բարեպաշտ ուխտաւորներ, չը գտնելով տեղ փոքրիկ եկեղեցու մէջ, շերտաւոր կերպով զվարթաց աղօթում էին արևի տակ։ Ուխտաւորների բազմութեան մէջ խառն երևում էին լաւ հասարակութեան քնքոյշ սեռի ներկայացուցիչները, որը ոտով, որը կառքով։ Այստեղ այնտեղ ֆրանսիացի դէս դէսերը կամ ոտով կամ ձիով, prince—nez քթին դրած, դեղին և կարմիր ձեռնոցներ հագած, արհամարհանքով նայում էին խիղճ բարեպաշտ, ճշմարիտ բոլոր սրտից աղօթք անող ստորին դասի ուխտաւորների վրա, այդ հարտաճարված և անկեղծ քրիստոնեայ ամբոխի վրա...

Անտարքեր նայողի համար տեսարանը հիանալի էր՝ զերեցիկ ընթերցում, սարեր խիտ անտառով պատած, շերտաւոր ամբոխ, որ չըլում էր, աղօթում էր, խօսում էր, զուարթ և երջանիկ դէպքով համբերում էր եկեղեցու պատերը, մոմ էր վառում... Տեղ տեղ երևում էին ծառերի մէջ սարերի գանգալների վրա ուխտաւորների և հիւրերի խմբերը իրանց բազմազան շորերով... և այդ ամբողջ նկարչական տեսարանի մէջ տեղ լուսաւորված արեգակի տաք ճառագայթներով, կանգնած էր փոքրիկ սպիտակ եկեղեցի, լի ամբոխով, որտեղից շարունակվող ժամանացութեան ձայներ էին զալիս...

Պատարագիւր ինքն սրբազան կարգինալն էր։ Սուրբ սեղանի առջև կանգնած էր Ժան-Վալթանը իր բոլոր ընտանիքով։ Նոյա օտների տակ փռված էին թանգալին գորգեր։ Ամենի հայեաքը նրանց վրա էին ուղղված։ Ժան-Վալթանի դէմքը վայ-

րում էր մի առանձին աննկարագրելի երջանկութեամբ և, կարելի է ասել, համեստ սրբութեան զգացմունքով։ Նրա դէմքից երևում էր որ ինքն զգում է թէ մեծ, սուրբ գործ է կատարել...

Յանկարծ ժամանացութիւնը ընդմիջվում է՝ կարդիմալ յայտնում է թէ կամենում է մի քարոզ անել... Սղօթները ձայնը դադարում է։

Սիրելի ժողովուրդ, սկսում է այսպէս կարդիմալ, մարդիկ ամենաբարձր, ամենաազնիւ բարոյական և քրիստոնէական յատկութիւնը—առաքելութիւնն է։ Առաքելի կոչվել կարող է միայն այն մարդը, որ իր ամբողջ կենսելը ընթացքում անընդ է եղել, որ միշտ բարի է գործել, որ երբեք չէ կանգնել բարեգործութիւնների առաջ, որ միշտ մեկնել է ձեռքը կարօտեալին, աղքատին, քաղցածին, որ իր վերջին ունեցածը դնել է իր անձը ամեն բանից զրկել է իր նըմաններին օգնելու համար, ամեն տեսակ նեղութիւններ է կրել, ոչ թէ միայն կարօտեալին օգնելու համար, բայց և քրիստոնէական, ճշմարիտ աւետարանական զգացմունքից զրկված իր թշնամուն անգամ օգնութեան ձեռք է մեկնել...

Այդ տեսակ առաքելապաշտ անձ դուք ունե՞ք այստեղ ձեր աչքի առջև՞ դա այն տաճարի հիմնող պատուելի Ժան-Վալթանն է։ Նրա ամբողջ կենսելը լի էր բարեարարութիւններով, նա երբեք ոչինչ խնայած չէ ուրիշն բարեարարութիւն անելու համար։ Ի դուր կը պտուէ՞ք նրա կենսել մէջ մի որ և է սխալ, մի բիծ անգամ... Ե դիտէ՞ք ինչպէս շինվեցաւ այդ եկեղեցին։ Առաքելի մարդը, այդ տաճարի գերաններ հիմնողը, ոչ թէ իր կարողութեան աւելորդ միջոցներից է նուրիշ այդ աստուածաճանց շինութեան կառուցման վրա, բայց նրան շինելու ժամանակ զրկում էր իր անձը և իր ընտանիքը օրական ամենակարեւոր պահանջներից որ միայն զուրկ բերէ շինութիւնը։ Այդ տեսակ բարձր, վսեմ գործի համար, մենք

հասարակ մահկանացուներս անկարող ենք որ և է վարձատրութիւն տալ։ Այդ տեսակ գործի համար միայն բանականորդ Աստուածը կարող է վարձատրել։ Մեղ մնում է միայն մեր մեղաւոր մաղթանքները առ Աստուած բարձրացնել, որ նա ըստ արժանոյն վարձատրէ իր զթութեամբ այդ առաքելի մարդուն և խնդրել նորանից որ սուրբ պէս մարդկը բազմանան մեր հասարակութեան մէջ—ամէն։

Դարեպաշտ ամբողջ կրկնեց ամէն, և հանդիտու առանձանդ լսած քարոզի խոր տպաւորութեան տակ, փոքր առ փոքր սկսեց զուրս գնալ եկեղեցուց։

Շատերը ստորին ժողովրդից մօտենում էին Ժան-Վալթանին և նրա ձեռքերը համբուրում էին։ Բարձր դասի հասարակութեան ներկայացուցիչները, որոնց թւում կային և նշանաւոր դեր խաղացող անձինք հասարակութեան այլ և այլ դասաւորակներ, սեղմում էին նրա ձեռքը և շնորհաւորում էին նրան։

Պատարագիւր յետոյ կաթոլիկ կղերը իր սուրբ պարտաւորութիւնը համարեց եկեղեցուց գնալ օրհնել Ժան-Վալթանի տունը...

Երեկոյ էր։ Լավում էին երաժշտութեան ձայներ։ Ժան-Վալթանի տունը ճաշի հրաւիրված էին մօտ 300 անձինք։ Դահլիճները փառաւոր կերպով լուսաւորված էին։ Տան փառաւոր և ընդարձակ դաւթում պատրաստած էր և հասարակ ժողովրդի համար ճաշկերպի։

Ահագին դահլիճում դրած սեղանների շուրս կողմը կը նկատէիք դուք պատուաւոր մարդիկ, բարձր պաշտօնեաներ, փայլուն օֆիցէրներ, բարձր ուսում ստացած երիտասարդներ, քնքոյշ կանայք և օրիորդներ,—մի խօսքով ֆրանսիական տեղական հասարակութեան ամենաբնորոք մասը։ Առաջարկվեցան ճաշի ժամանակ բազմաթիւ տօստեր, խմիչքան շատ կենացներ... Վերջապէս ամենքի աչքերը մեղմ սիրով ուղղվեցան դէպի տօնախմբ-

ութեան հեղինակը, դէպի առաքելի Ժան-Վալթանը... առաջարկեցին մի տօստ նրա կենացը... Ամենքը ոտքի կանգնեցան, դահլիճը զորդվեցաւ բարձրաձայն և անկերպանալի կեցցեներով, բոլոր հիւրերը հերթով մօտենում էին Ժան-Վալթանին, իւրաքանչիւր ներկայ գտնվողներից իրան պատիւ էր համարում սեղմել նրա ձեռքը, համբուրել նրա հետ և խօսել իր զինով լի բաժակը պատուելի մարդու բաժակին...

Վերջապէս Ժան-Վալթանը դուրս եկաւ գաւիթը, որտեղ ստորին ժողովրդի, մեծ մասամբ մշակների դասի ներկայացուցիչները ձայնում էին, նա երեկցաւ և կրկին օղջ զգրվեցաւ անվերջաշալի ուրաների և կեցցեների ձայներով...

Ամբողջ կրկին չըբապատեց նրան համբուրելով նրա ձեռքերը։

Միւս օրը տեղական մի անկախ ֆրանսիական լրագրում կարելի էր կաղալ հետեւալը՝ Երեկ սրբազան կարդիմալը հանդիսաւոր կերպով օծեց նորակաւուց եկեղեցին։ Օձման ներկայ է եղել խառն բազմութիւն հասարակութեան ամեն դասաւորակների։ Նոյն օրը մեծ ապատիւ պ. Ժան-Վալթանը, որը մասնաւոր նուիրատուութիւններով եկեղեցին շինվեցաւ, տուեց մի մեծ ճաշ հրաւիրած հիւրերին։

Եւ ահա, ընթերցող, ինչպէս կը պատմէի ես Ժան-Վալթանի պատմութիւնը, եթէ ես չի գօփ տեղը լինէի։

Թող ներէ ինձ երեկի մարդը իմ մեծ յանդգնութեան համար։

Ասիադի

լուր տարածող պարոններին, արդեօք իրանք այդպիսի պայմաններով կը տային փող:

Եթէ վերջինք մի է նոյն պայմանով 18 տարով և 7 ամսով, կը նստէ տարեկան 11 2/3% իսկ 54 1/2 տարով՝ 8 1/2%:

Խ. Խաչատուրեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բոման, 14 օգոստոսի 1875

Յարգելի բարեկամ:

Շնորհակալութեամբ կարգացի «Մշակի» մէջ թիֆլիսից հեռանալուն առիթով ձեր գրած համարական խօսքերն իմ համեստ գործունէութեան մասին գրականական ասպարէզի մէջ:

Արդարեւ, վարժագետական ծանր պայտօնի մէջ գրականական գրադմունքը ինձ համար միշտ մեծ միտքաբերութիւն է եղած: Համոզուած լինելով թէ ինչ մեծ նշանակութիւն ունի ազգային լեզուի և պատմութեան քննական մշակութիւնը մեր ժողովրդի վերանորոգութեան և պահպանութեան համար, միւս կողմից տեսնելով թէ որքան աղքատ է մեր գրականութիւնը այդպիսի գրութիւններով, եւ նաեւ ինքիս իմ համեստ գործունէութիւնը հայ լեզուի և գրականութեան մշակութեանը, Չնայ յայնիս եւ իմ հրատարակութիւնները հայկական հին և նոր լեզուներէ վերաբերութեամբ, այժմ թէ և պարագայունքս փոխած եմ, այնուամենայնիւ ղեկավարութիւն ունեւ ազատ ժամերս նուիրելու ազգային քաղաքական և գրականական պատմութեան մշակութեանը:

«Մշակը» կանոնաւոր կերպով ստանում ենք, նորա ընթերցումը մեծ միտքաբերութիւն է պատճառուած թէ կնիքս և թէ կնիքս:

Ձեր Ս. Պալասանեան

ՆԱՄԱԿ ԱՅԴՈՒՐԻՑ

Այսօր Ախալցխայի վիճակի գիւղերից մէկն է մօտաւորապէս քսան տուն Հայ բնակիչներով: Դիւղը ունի մի եկեղեցի և մի քանիսնայ, որ այդ եկեղեցում ժամատարութիւն է անում: Բայց գուցէ Ախալցխայի նկարագրութիւնը այնքան հետաքրքիր չէ, որքան այն ցաւալի դէպքը, որ եղաւ օրերուս: Անա դործը ինչուսն է: Տեղւոյն եկեղեցու համար Ախալցխայի հողերու կառավարութեանց ուղարկուեցաւ մի ճաշիցս գիրք, որի համար այստեղի աղքատ ժողովուրդը պէտք է 150 ռուբլ վճարէ: Բայց որովհետեւ նա կարողութիւն չունի, իւր քանակային միջոցով յայտնից հողերու իշխանութեանը, որ այդքան մեծ դուրսարկ չէ կարող վճարել: Երբ քանակային այս լուրը հասցնում է Ախալցխայի յաջորդին, նրանից պատուէր է ստանում ժամատարութիւնը դադարեցնել և փակել եկեղեցին: Այսպիսով այդ խեղճ մարդիկ քանի ժամանակից եկեղեցու երես չը կարողացան տեսնել: Բացառութիւն չեղաւ մինչեւ անգամ չարաթիւ և կիրակի օրերի համար, երբ մեր եկեղեցին ամսոյս օգոստոսի 15-ին տօնում էր Աստուածածնայ օգնելը:

Սրանից երեք օր առաջ, երբ Ախալցխայի յաջորդը գնում էր թիֆլիս և անցաւ այստեղից, ժողովուրդը չըջպատեց նորա կառքը և խնդրում էր թոյլտւութիւն քայ անել եկեղեցին, բայց յաջորդը, ասում են, պատասխանեց, որ մինչեւ ժողովուրդը իւր սեպական գրպանից չը վճարէ 150 ռ. եկեղեցին փակ կը մնայ: Խեղճ մարդիկ յուսահատուած ստիպուած էին ասել որ եթէ եկեղեցին չը բացուի, իրանք օտար դաւաճութիւն կը դնեն, բայց այնու ամենայնիւ եկեղեցին մինչեւ այժմ մնում է փակուած:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 25-ին և 26-ին Արեւելեան կովկասի նուաճման և յոյսալից Կապուսի Մեծութիւնների թագադրութեան օրը, թիֆլիսի Սիմոնի մայր եկեղեցում հանդիսաւոր ժամատարութիւն էր կատարած, իսկ երեկոյան Ալեքսանդրեան այգիում երաժշտութիւն էր անում և այգին լուսաւորված էր:

Այս օրերս հասաւ մեր քաղաքը իտալացի նշաւաւոր երաժիշտ պ. Ալֆոնսո Զօլտաշին: Պարոնը պիտայի վրա է ածում և եւրօպայի բոլոր մեծ քաղաքներում կոնցերտներ տալով, ամեն տեղ մեծ համակրութեամբ ընդունվել ինչպէս որ տեսնում ենք թէ իտալական, թէ ֆրանսիական, թէ յունական և թէ այլ ամենայնայնիւ լրագիրներից: Պ. Զօլտաշինը Հռոմի, Բոլոնիայի, Ֆլորենցիայի, և այլ իտալական մի քանի քաղաքների երաժշտական ընկերութիւնների անդամ է: Նոյնպէս և Բրիւսելի ակադեմիայի անդամ: Նա ղեկավարութիւն

ունէ կարճ ժամանակում մի կոնցերտ տալ թիֆլիսում: Մեզանում այնպէս հազիւ է պատահում լաւ երաժշտութիւն լսել, որ յայտնենք մեր համարակիցները կը շտապէ պ. Զօլտաշինի կոնցերտին ներկայ գտնելու:

Թիֆլիսի հայ գերատնայական ընկերութիւնը վարչութեամբ պ. Գ. Չալկեանի նախագահութեամբ խնդրում է հայ երիտասարդներից, որք ունեն թարգմանական կամ ինքնուրոյն պիեսներ հայերէն լեզուով, ուղարկել նոյա օրինակը «Մշակի» կամ «Մեղրի» խմբագրատուն, որք կը հասցնեն նրանց ընկերութեանը քննութեան և ներկայացման համար: Թարգմանողը կամ հեղինակը, որի պիեսան արժանի կը համարվի թատրոնի մէջ ներկայացումը լինելու, կը ստանայ վարձ առաջին ներկայացումից գոյացած արդիւնքին համեմատ թարգմանական պիեսների համար 70%, իսկ ինքնուրոյն գրվածների համար 100%: Յետագայ ներկայացումներից իւրաքանչիւր անգամ կը ստանայ 5 ռուբլ:

Փօթի-թիֆլիսեան երկաթուղու գնացքների երթևեկութեան ժամանակը փոխվել է սկսած 1-ից: Ուշագրութիւն ենք դարձնում «Տեղեկագրային» վրա:

Ներկայ համարում ուրախութեամբ տպւած ենք մեր բարեկամ պ. Ս. Պալասանեանի դէպքին մեզ ուղղված, Բոմանիայից ստացած նամակը:

Օգոստոսի 30-ին շաբաթ օրը սկսվեցան թիֆլիսի թատրոնում իտալական օպերայի ներկայացումները: Տեղեկի առաջին անգամ «Լա Ժաֆորա» օպերայի օպերան:

Առիթ ունեցանք ներկայ գտնվել մեր իտալական օպերայի առաջին ներկայացմանը և պարտաւորութիւն ենք համարում հաղորդել մեր տպաւորութիւնները ընթերցողին:

Առաջին տուած օպերա օպերան «Լա Ժաֆորա» օպերան էր (Փաբոտտա): Թատրոնը լի էր: Թիֆլիսի հատարակութեանը օպերա լսելուց, սկզբից սառն կերպով ընդունեց երգչներին: Բայց արդէն ներկայացման առաջին գործողութիւնից յետոյ լսելեան ոգեւորված ծափահարութիւններ և քանի գնում էր, համարակիցներն ոգեւորվեցին անկանում էր: Մինք պէտք է անկեղծ խոստովանենք, որ թիֆլիսը վաղուց չէ ունեցել օպերայի այդ տեսակ յաջող կազմակերպութիւն: Առաջին ներկայացման մէջ մենք տակի ընկեցանք լսել պիւր մաքուր-կոմպոզիցիոն օպերայի Տիֆլիսի թատրոնում, ուստի և վերին աստիճանի համակարգակն ծայրը: Եւ որ ուշագործութեան արժանի է և միանգամայն գնահատելի է նրա մէջ, այն է որ օպերայը (և այդ շատ հարկ է պատահում երգչուհիների մէջ), ոչ թէ միայն լաւ երգիչ է, բայց և գերաւանդուն է: Շնորհիւ երգչուհու խաղը կատարելապէս ներդաշնակվում է նրա թափ և ընդարձակ ձայնի հետ, որի ստորին ընդհատը մանաւանդ հիացրեց ամենին:

Չնայ կարող չը խոստովանել որ և պ. Կարնի (բարիտոն) թէ և դեռ փոքր չէ անփորձ երգիչ է երևում, բայց ունի վերին աստիճանի դրօշման ձայն: Նա երգում է բնական, համեստ կերպով, մի և նոյն ժամանակ նրա ձայնը ճշմարիտ պարզ և լի կուրծքի բարիտոնի ձայն է: Միայն մեզ երեսք թէ նա ունի մի պակասութիւն, այն է արտասանութեան անորոշ լինելը: Պ. Կարնիի երեսքը բնիկ վրա մի շատ յաջող ապագայութիւն արաւ օրինաւոր ձայնի հետ միացած փառաւոր հասակ և կազմված վերին արժանաւորութիւնները չեն մի երգչի համար:

Թիֆլիսի հատարակութեանը ծանօթ տեսոր Ալեքս. այժմ հրաւիրված է օրպէս երկրորդ տեղի: Տեսնե՛ք առաջին անգոր ինչպէս կը լինի... Տուած օպերայի ամբողջութիւնը, վերջապէս այն օրը կ'ստանայ մի անհամեմատ լուսացաւ, ծածկում էին ամենաւոր մի քանի պակասութիւններ: Թատրոնի վարչութեան ուշագործութիւն ենք դարձնում խորհրդի կազմակերպութեան աչքի ընկնող պակասութիւնների վրա:

Ուրախութեամբ լսում ենք որ Ն. Երսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը վճարել է գաղութի օրհինդների մուծողը յետ անել Առաքել քանանայ Սուքիանեանից և ապա կապալով քաղաքային Շահաբադաղեանցին: Ուրեմն օրհինդների մուծողի հարցը, որ այդքան անբաւականութիւնների և աղմուկների առիթ է եղել, վճարվեցաւ յաջողակ կերպով: Յոյս ունենք որ այսուհետեւ երեկոյանը սուպի տեղ հաւած դմակ չեն ստանայ... Հոգաբարձութեանից երկուսը, ինչպէս լսել ենք, պ. Պոպով և Ղ. Լոնդ քանանայ: Խաղաղեանց քաղաքական արխանու էին Առաքել քանանային թողնել օրհինդի կապալը: Շատ լաւ է որ այդ նրանց չաջողեցան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԵՐՏԵՐՈՎԻՆԱՅԻ ԱՍՏԱՄԲՈՒԹԻՆԸ

Իւր ժամանակին «Մշակը» յայտնել էր, որ թիֆլիսի մի մասնում, այն է Հերցեգովինայում ապստամբութիւն է սկսուել: Այժմ այդ ապստամբութիւնը անելի և անելի զարգանում է

և մեծանում: Ապստամբութիւնը սկսվելով Հերցեգովինայի հարաւարեւմտեան մասում, այժմ տարածուել է գրեթէ ամբողջ դալմատեան սահմանի վրա: Ապստամբութեանը բրուսելն այն նեղ տարածութիւնը, որը բաժանում է Սերբիան Հերցեգովինայից և նա մանաւանդ այդ իրողութիւնը վտանգաւոր է թիֆլիսի համար, որ եթէ ապստամբութեանը պահանջներ տարածութիւնը, այն ժամանակ Հերցեգովինան բոլորովին բաժանուած կը լինի թիֆլիսից, որովհետեւ դա միակ ցամաքն է, որ միացնում է թիֆլիսի Հերցեգովինայի հետ: Թիֆլիսի Հերցեգովինայում իր գլխավոր գործերի հետ կարող է յարաբերութիւններ ունենալ միմյանց զալմատական Ալբի նաւահանգիստով: Բայց այդ տեղից մինչեւ Հերցեգովինա ճանապարհը անցնում է սառաւ տեղերով, որք արդէն բռնուած են ապստամբութեանը, այդ տեղից թիֆլիսը տեղափոխվում է անցկացնել իւր գործերը, իսկ մնացած տարածութիւնը պատկանում է Աստրիային, և այժմ թիֆլիսի անխառնում է, որ իրան թոյլ տրուի անցկացնել գործերը Աստրիայով: Բացի Հերցեգովինայից, Բոսնիան էլ հանդիսանում է և գրեթէ նորա ամբողջ արեւմտեան և մասամբ հիւսիսային մասը գտնվում են ապստամբութեանը: Ներքին ձեռքեր: Յայտնի է, որ մինչեւ այժմ ապստամբութեանը թիւը հասնում էր 8-10 հազար մարդի, իսկ նոյա առաջնորդների համար գրում են, որ փորձուած, եռանդուն մարտիկ են: Առաջին կռիւներից թիֆլիսը գործերի հետ երևում է, որ ապստամբութիւնը ուստի կազմակերպութիւն ունի, իսկ այն իրողութիւնը, որ ապստամբութեանը կանոնաւոր կերպով են կազմել, երևում է թիֆլիսը Տրեբիշէ քաղաքի պաշտպանից: Թիֆլիսը գործերի գրութիւնը բաւական անմխիթար է: 2ը նայելով, որ թիֆլիսը միմիայն թիւը թիֆլիսի մէջ լուսնեան գործերը հաշվում էին 30 հազար, բայց այդ 30 հազարից հազիւ 5 հազար մարդ կարողացաւ դարձել մտնել, այնպէս որ Բարձր Պառլամ ստիպուած է Պոլսից գործեր ուղարկել: Ապստամբութեան պատճառների մասին տեղեկութիւնները բաւական մոլոր են: Սկզբից հաւատացնում էին, որ դա ծանր հարկերի և թիֆլիսը տեղափոխութեան բռնակալութեան հետեւն էր, այնպէս որ մահաւանդները մինչեւ անգամ կուռում էին տեղափոխութեան գործերի դէմ, յետոյ ապստամբութիւնը ստացաւ լուսնեական-աղբային պատկեր, իսկ յետոյ կոսովսկան՝ քրիստոնեաների մահաւանդների դէմ: Ինքն ըստ ինքեան Հերցեգովինայի ապստամբութիւնը վրտանաւոր չէր կարող լինել, եթէ երկու չը լինէր, որ դա կը տարածուի ամբողջ Բալկանեան կիսակղզու վրա և յետոյ ամբողջ Աստրիայում, որովհետեւ բոլոր եւրոպական թիֆլիսի վաղուց գտնվում էր գրգռուած դրութեան մէջ թիֆլիսը անասնիկ հարստահարող կառավարութիւնից: Ահա սա է պատճառը, որ առիթ է տալիս մտածել, թէ Հերցեգովինայի ապստամբութիւնը ամբողջ եւրոպական պառաւորութիւն մի սկիզբ է: Այժմ հասկանալի է թէ ինչն այդպէս անհանգիստ են եւրոպական քաղաքական մարդիկը և թէ ինչն են աշխատում արմատաւորել անկաւապստամբութիւնը: Վերջին լուրերից տեղեկանում ենք, որ Ռուսիայի, Աստրիայի և Գերմանիայի ներկայացուցիչները համաձայնել են միասին աշխատել: Երբեք տեղափոխութեան ներկայացուցիչների նպատակն է հասկանալի ապստամբութեանը, որ իրանցից ոչինչ օգնութեան չեն կարող սպասել, միւս կողմից համոզել թիֆլիսը կառավարութեանը ընդունել ապստամբութեանը գնալու և նրանց բաւականութիւն տալ, իսկ այժմ մենք դիտենք, որ Առիթանը համաձայնել է Նիսի-Ֆաշայի նշանակել, որ ապստամբութեանը գնալու և Ռուս կողմից ձայնի են տարածում, իբր թէ յիշալ երեք տեղափոխութեանը վճարել են, որ, եթէ թիֆլիսը կառավարութիւնը չը կարողանայ լուրացնել ապստամբութիւնը, իրանք զինաւորուած խռովութեան գործի մէջ: Այս դէպքում կարելի էր գործը յանձնել Աստրիայի, իբրեւ 1856 թ. Փարիզի պայմանի պայմանով: Բայց այս բոլոր անհաւատարմի է, որովհետեւ այս դէպքում հարկաւոր կը լինէր Ալգիրայի, Ֆրանսիայի, և Իտալիայի համաձայնութիւնը, բայց զրա մասին մտածել անգամ չէ կարելի:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Ստրասբուրգ 22-ին օգոստոս:

Անցեալ նամակիս մէջ ես խոստացել էի չը բաւականանալ դորանով, որ ցոյց տամ ինչքան ապարդիւն կը լինէր այժմ, եթէ Ղուբայի և Գերբէնի կայաւածաւորները, չը նայելով արեւմտական արկղարկի տարածման, կրկին շարունակէին

պահպանել իրանց տորոնի ցանքերը և դաշտերը: Ներկայ նամակիս նպատակը պէտք է լինի առաջարկութիւն անել թէ ինչ տունկեր կարող են բաւական արդիւնաւոր համարվել, որ կարողանային նրանցից տուած եկամուտի կողմից նշանակութիւն կորցրած տորոնի տեղը բռնել:

Չը պէտք է մոռանալ, որ թէ և նոյն տունկ անգաղար ցանկով նոյն գետնի մէջ, այդ գետնի ժամանակով անպտղաբեր է դառնում, բայց միայն բուն այս տունկի և նրա նմանների վերաբերութեամբ, և ոչ ուրիշ տեսակ տունկերի համար: Ուրեմն եթէ մի գետնի ոյժը կարող է սպառնալ համարվել տունկերի մի տեսակի համար, չէ նշանակում, որ նա անպտղաբեր է և այլ տունկերի վերաբերութեամբ:

Եթէ Եւրոպայում լինէր այսպիսի մի հանգամանք, որ մի տունկ յանկարծ աւերուր համարվէր ցանկում, այն ժամանակ նրա տեղը իսկոյն կընտրէին մի ուրիշ, որ բաւական արդիւնաւոր է և գուցէ եղած կորուստներն էլ առանձին նկատելի չէին լինել:

Կովկասում այսպիսի մի հարց ի հարկէ չատաւելի բարդված է: Յիշե՛ք միայն մի քանի պայմաններ, որոնք կարող են արգելք դառնալ մի նոր արդիւնաւորութեան: Նախ գործի ծանօթ մարդկերանց պակասութիւնը և բնիկների նախապաշարմունքները, յետոյ դոյա անփորձութիւնը ամեն նոր տունկի համար հարկաւոր հսկողութեան մէջ, ժողովրդի արամարանքը դէպի երկիր պարարտացնելու ամենայն ձևերը, հազար ու մէկ պայմաններ չը գիտնալ ինչոր վերաբերութեան նոր արդիւնքի վաճառահանութեան, ամենայն յարաբերութեաների բացակայութիւնը մեր արուեստագործական և գործարարական չըրանցների հետ, և վերջապէս շատ տեղ երկրի սպառվել ոչ միայն մի որոշ տունկերի տեսակի վերաբերութեամբ, այլ գետնի լիովին անպտղաբեր դառնալ անառանդների ոչնչացնելու պատճառով և ուրեմն դորանից բխող գետնի չորութեան, ջրերի սպառվելու պատճառով:

Այս բոլոր պայմանները, որոնք արդիւնք են մեր երկրի ժողովրդի անիշխնութեանը, նախապաշարմունքների, կամակորութեան, անհոգութեան, անաշտութեան և ձեռնարկութեան ոգու իսպառ բացակայութեան, ի հարկէ հազար ու մէկ արգելք են դառնում ամենայն նորութեան, արդիւնաւորութեան ամեն նոր ճիւղի մացնիլուն մեր երկրում:

Մեր ժողովուրդը բոլորովին երկխայտիկ գրութեան մէջ գտնվելով, ցոյց է տալիս երկխայտիկ բնաւորութեան ամենայն յատկութիւնները: Նա միշտ պատրաստ է լաց լինելու իր գրութեան մասին, երբեք գոհ չէ, և ոչ թէ այնպէս դժգոհ է ինչպէս մի մարդ, որ դէպի առաջ է ձգուում, ոչ նա լալիս է, բայց մի քայլ, մի շարժումը չի անի, որ իրան վնասող պայմանները հեռացնել կամ գոնեա հեռացնելու աշխատի: Նա լալիս է, որովհետեւ լաց լինել նորա բնաւորութեան ամենից շատ համապատասխանող դրութիւն է: Առաջարկեցե՛ք նրան միջոցներ, որոնք ծախի նա ինքն էլ շատ լաւ գիտէ թէ օգտաւէտ են՝ նա ձեռ կը պատասխանի ձեռ ինչից այդ անեմ, եթէ մեր գիւղում ոչ ոք այդ չէ անում:—Ես ինչի պարարտեցնում գետնին, եթէ ոչ ոք չէ պարարտեցնում: Նա այդ կասի, թէ և փորձով գիտէ որ պատահում է պարարտացրած գետնին շատ աւելի պտղաբեր է:—Անկի յարմար չէ ոչինչ հոգս չը տանել և գնալուով, լաց լինել որ երկիրը անպտղաբեր է, որ գետնի պակասում է, որ նա չէ կարող իր ամբողջ ընտանիքը կերակրել իր աշխատանքով, թէ և իր բոլոր ոյժերն էլ գործ դնէր:

Այս բոլորը գիտնալով, ես այնու ամենայնիւ համարձակվում եմ մի քանի խօսք ասել, թէ ինչ տեսակ տունկեր պէտք է տորոնի տեղ բռնել:

Յորեքն կամ այլ արմատի մասին մտածելու աներդ է, որովհետեւ կարելի է, որ տորոնի զայտերը լաւ հունձը էլ չը տան, որովհետեւ գետնի գրեթէ բոլորովին զօրկ է ամենայն խոնավութեանից և բացի սորանից յայտնի է թէ արմատը ամենափոքր վնասակարն է, եթէ վաճառահանվին: Յայտնի է որ Լօնդոնի վաճառահանի մէջ ցորենի վերա գինը (փոքր տարբերութիւններով, որոնք կախված են նիւթի տեսակից) նոյն է, չը նայելով թէ այս ցորենը բերած լինի կանաչաւոր, թէ Լեհաստանից, Հնդկաստանից թէ հարաւային Ռուսաստանից: Ուրեմն քանի որ աւելի հեռաւոր է մի երկիր և նորա ճանապարհները աւելի սկզբնական անկատար դրութեան մէջն են, այնքան մեծ կը լինի ծախար նիւթը Եւրոպայի մեծ վաճառահաններից մինչև հասցնելու համար: Հասկանալի է, որ ուրեմն վտտակը համեմատաբար աւելի նուազ է, եթէ յիշե՛ք, որ բացի վերջնական գնից, գրեթէ նոյն են և ծախքերը, որոնք հաբ-

